

ղաչեմ զթագաւորն, եւ հաշտեցուցանեմ ընդ քեզ, եւ ինչ որ արժան է տալ քեզ՝ ջանամ զի տայ»:

6 Եւ սպարապետին Յայոց Վահանայ Մամիկոնէի պատասխանի արարեալ ասէր ցՄիհրան, եթէ «Արեաց տէր որ լինի՝ արդար աչաւք պիտի նայել յամենայն մարդ իբրեւ զթագաւոր, եւ արդարապէս տեսանել եւ արդարապէս լսել, ըստ արժանի թագաւորի: 7 Բայց այր թագաւոր, որ ուղիղ աչաւք չիայի ի ծառայս եւ ուղիղ լսողութեամբ չլսէ ուրուք զբանս, այլ համակ ըստ իշխանութեան վարի, եւ ոչ ըստ արժանի իրաւանց քննութեան, այլ առաւել եւս որ կարի դժնդակագոյն է եւ աշխարհի կորստեան¹ պատճառ, եւ հանապազ գայն առնէ, եւ կամի տեսանել այլոյ աչաւք եւ լսել այլոյ ականջաւք՝ ծանր է ծառայութիւնն այն եւ դառն, եւ վտանգ՝ որում ոչ ոք կարէ կալ առաջի: 8 Վասն զի տէր, որ յիւր ի ծառայից զլաւ եւ զվատթար չգիտէ ընտրել, եւ ըստ արժանի իւրաքանչիւր ումեք մատակարարել զպիտոյսն ոչ կամի՝ այնպիսին լաւ ծառայի տէր դժուարաւ կարէ լինել: 9 Արդ՝ Յայոց աշխարհս ո՛րպիսի մեծ եւ պիտոյի աշխարհ է. եւ արդ ցոյց ինձ այր մի յայսպիսի աշխարհի, որ թէ առաւելաւ թագաւորութեամբ արժանաւորապէս հասեալ է ի տանուտէրութիւն². այլ որեար աւազակ եւ անպիտան, հացկատակք եւ վատտոհմիկ³, որ գան զայնպիսի մեծ թագաւորութիւն խաբէն, եւ ընդ կրակի փառս գնեն⁴ եւ տէրութիւն. եւ ի ձէնջ ըստ կողմն ելեալ սակաւ մի՝ միզեն ի կրակն, եւ յանթել⁵ զաղբ իւրեանց արկանեն, եւ զվաճառականն եւ զվաճառն ի միասին թշնամանեն: 10 Եւ այլ լաւութիւն եւ քաջութիւն եւ միտք եւ գիտութիւն, որով աշխարհ շինի եւ միջի լինի՝ այն չիսնդրի եւ արհամարհեալ է. այլ անպիտան եւ վատտոհմակ մարդկան պատրողութիւնն ի մէջ անցեալ յարգի, եւ դուք առ ճանաչող⁷ ունիք զձեզ: 11 Լուեալ է քո, որ Միհրանդ ես, եւ ամենայն Պարսից՝ զբանս զայս յԱրեաց տեսանեն ի Պերոզէ⁸ առաջի ամենեցունց յատենի, թէ «Այր վատ եւ գունդ անպիտան Ասորի է. բայց քան զԱսորի այր՝ Յայ մարդ շատ վատթար է եւ անպիտան»: 12 Եւ ո՛չ արդեաւք լաւ էր մահ քան զայն լուր յայնպիսի թագաւորէ: 13 Եւ արդ՝ իմ երկուս կռիւս արարեալ է ընդ Արի մարդկան, եւ երրորդն այս է որ ընդ քեզ արարաք. եւ ընդ որս զերկուս կռիւսն արարաք՝ ընդ այնպիսի երեւելի եւ քաջ մարդկան կռուեցաք, զոր ինքն Արեաց տէրն եւ ամենայն Արիք ճանա-

1 Ձ. կորստի

2 ՏՏ. հասեալ ի տանուտէրութիւն

3 ՏՏ. վատտոհմիկ

4 ՁԱտ. փառս դնեն. այսպէս ըստ ԲԳտ.

5 Ձ. անթել

6 Ձ. միտք եւ պիտութիւն... չի խնդրի

7 ՏՏ. առ ճանաչող

8 Ձ. ի պիրոզէ. Ատ. ի պիրոզէ. այսպէս ըստ ԲԳտ.